

ԿԱՐԾԻՔ

ԱՆՈՒՇ ՀՈՎԻԿԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՏԵՍԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)» ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ ԺԲ.00.01- «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պետության առջև դրված խնդիրների լուծման և նպատակների գործնական իրականացման հիմնական գործիքներից մեկը հանրային ծառայությունն է: Հանրային ծառայության ինստիտուտը ունի խորը արմատներ, ձևավորվել է պետության և իրավունքի առաջացման հետ մեկտեղ, ամրապնդվել և անցել է զարգացման երկարատև ճանապարհ: Կարևորելով հանրային ծառայության դերը պետության խնդիրների և գործառույթների արդյունավետ իրականացման գործում՝ յուրաքանչյուր պետության կարևորագույն խնդիրն է հանրային ծառայության կայուն համակարգի ստեղծումը և զարգացումը: Հանրային ծառայության համակարգի ստեղծման և ներդրման պահից ի վեր համակարգի բովանդակությունը կազմող բաղադրատարրերը ենթարկվել է մի շարք փոփոխությունների՝ դիմագրավելով ժամանակի մարտահրավերներին:

Հանրային ծառայության համակարգում ներկայումս ամենակարևոր խնդիրներից մեկը հանրային ծառայության ոլորտը կանոնակարգող օրենսդրական դաշտի լավարկումն ու կատարելագործումն է՝ օրենսդրության մեջ առկա իրավական հակասությունների բացահայտումն ու վերացումը, հանրային իշխանության մարմիններում հանրային ծառայության կազմակերպման և գործունեության իրականացման հիմնախնդիրների, ընդհանուր օրինաչափությունների վերհանումը և

դրանց իրավական լուծումներ տալը: Այս խնդիրների լուծումը պահանջում է տեսական-իրավական վերլուծության հիման վրա նորմատիվաիրավական-օրենսդրական փոփոխությունների միջոցով հանրային ծառայության արդիականացում, օրենսդրական կարգավորման կառուցակարգերի և ընթացակարգերի պարզեցում ու հստակեցում, որոնց շնորհիվ հանրային ծառայությունը պետք է դառնա բաց, մրցունակ, արդյունավետ գործունեություն, քանզի հենց հանրային ծառայությունն է կոչված կյանքի կոչել պետության քաղաքականությունը առողջապահության, տնտեսության, սոցիալական զարգացման, տեղեկատվական տեխնոլոգիաների, կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և հանրային ֆինանսների կառավարման ոլորտներում:

Ներկայումս հանրային ծառայության իրավական կարգավորման համակարգում դեռևս չկան օրենսդրության հետևողական կիրարկման և դրա նկատմամբ վերահսկողության գործուն մեխանիզմներ, սահմանված չեն լիազորությունների իրականացման թերացումների համար համարժեք պատասխանատվության միջոցներ, հետևաբար թեև 2014 թվականից նախաձեռնվել է հանրային ծառայության համակարգի ռազմավարական բարեփոխումների գործընթաց, այդուհանդերձ, հանրային ծառայության իրավական համակարգում դեռևս գոյություն ունեն որոշակի հիմնախնդիրներ, որոնք պահանջում են տեսական-իրավական վերլուծություն և գիտականորեն փաստարկված օրենսդրական-իրավական լուծումներ:

Այս առումով, ընտրված թեման, միանշանակ, արդիական է նաև մեր օրերում: Հանրային ծառայության ինստիտուտի ձևավորման և հետագա զարգացման օրինաչափությունների և հիմնախնդիրների հետազոտման արդյունքում՝ ատենախոսության հեղինակը կարողացել է վերհանել հանրային ծառայության համակարգում առկա այնպիսի օրինաչափություններ և հիմնախնդիրներ, որոնց կարգավորումները կարող են հիմք հանդիսանալ հանրային ծառայության՝ որպես իրավական ինստիտուտի բարեփոխման համար: Հատկապես գովելի է հեղինակի հետազոտական մոտեցումը, որի շրջանակներում վերջինս պետության և իրավունքի տեսության համատեքստում, ուսումնասիրել է հիմնախնդրի և՛ տեսական-իրավական,

և՛ միջազգային-իրավական, և՛ գործնական-կիրառական բաղադրիչները՝ դնելով բոլոր բաղադրիչների իրավակարգավորման և գիտակիրառական պահանջ:

Վերոգրյալից բխում է որ Անուշ Հովիկի Մովսիսյանի «Հանրային ծառայության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (տեսական-իրավական վերլուծություն)» վերտառությամբ ատենախոսությունը իրավաբանական գիտության սեփական մոտեցումների վրա հիմնված ավարտուն գիտական հետազոտություն է:

Ատենախոսությունը աչքի է ընկնում նաև հարուստ աղբյուրագիտական բազայով: Ատենախոսը հետազոտության ընթացքում օգտվել է թեմային առնչվող բավականին հեղինակավոր աղբյուրներից՝ մասնագիտական և հարակից գրականությունից, նորմատիվ փաստաթղթերից, նախադեպային որոշումներից և համացանցային ռեսուրսներից:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, որոնցում ներառված են տասներկու ենթագլուխներ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության ներածության մեջ հեղինակը հիմնավորել է ընտրված թեմայի արդիականությունը, շարադրել է թեմայի գիտական մշակվածության աստիճանը, ներկայացրել է հետազոտության նպատակներն ու խնդիրները, մատնանշել է հետազոտության օբյեկտը, առարկան, ուսումնասիրության տեսական-մեթոդաբանական հիմքը, ատենախոսության գիտական-տեսական և գործնական-կիրառական նշանակությունը, ձևակերպել է ատենախոսության գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսության կառուցվածքը:

«Հանրային ծառայությունը որպես համալիր իրավական ինստիտուտ» վերտառությամբ ատենախոսության առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից: Այն նվիրված է Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ինստիտուտի ձևավորման իրավական և պատմական նախադրյալների, այս ինստիտուտի ներդրման և զարգացման օրինաչափությունների և հիմնախնդիրների ուսումնասիրությանը: Հեղինակը կարևոր անդրադարձ է կատարել նաև «հանրային ծառայություն» և «հանրային ծառայության սկզբունք»

հասկացություններին, որից հետո ուսումնասիրել է հանրային ծառայության իրավական ինստիտուտի էությունը, վերլուծել է հանրային ծառայության կազմակերպման սկզբունքները, ներկայացրել է յուրաքանչյուր սկզբունքի բովանդակությունը և զարգացման օրինաչափությունները, բացահայտել և մատնանշել է հանրային ծառայության յուրաքանչյուր տեսակին բնորոշ հատկանիշները և զարգացման ընդհանուր օրինաչափությունները: Ուսումնասիրության արդյունքում հեղինակը հանրային ծառայության կոնկրետ տեսակի օրինակով հիմնավորում է, որ հանրային ծառայության յուրաքանչյուր տեսակ ունի իր առանձին օրենսդրական կարգավորումները և իրեն բնորոշ առանձնահատկությունները:

«Պետական ծառայության հիմնախնդիրները արդի ժամանակաշրջանում» վերտառությամբ ատենախոսության երկրորդ գլուխը, որը բաղկացած է երեք ենթագլուխներից, նվիրված է հանրային ծառայության առանձին տեսակի՝ պետական ծառայության ձևավորման և զարգացման իրավական հիմքերի ուսումնասիրությանը: Հեղինակը նախ ուսումնասիրել և վերլուծել է «պետական ծառայություն» հասկացության սահմանումը, պետական ծառայության ծագման և զարգացման ընդհանուր օրինաչափությունները, պետական ծառայությանը բնորոշ հիմնական հատկանիշները, որից հետո բացահայտել է պետական ծառայության ընդհանրությունները և տարբերությունները հանրային ծառայության մյուս տեսակների՝ համայնքային ծառայության և հանրային պաշտոնների հետ, ինչը մեծ կարևորություն ունի ընտրված թեմայի տրամաբանական շղթան ապահովելու տեսանկյունից: Հատկանշական է, որ հեղինակը համաչափության սկզբունքի համատեքստում ուսումնասիրել և տեսական-իրավական վերլուծության է ենթարկել յուրաքանչյուր քաղաքացու պետական ծառայություն ընդունվելու սահմանադրական իրավունքի ընդհանուր հիմունքները և սահմանափակման հիմքերը, վեր է հանել պետական ծառայությունը կարգավորող օրենսդրության հիմնախնդիրները, պետության և իրավունքի տեսության համատեքստում ուսումնասիրել է այդ հիմնախնդիրների և՛ տեսական-իրավական, և՛ միջազգային-իրավական, և՛ գործնական-կիրառական հիմքերը: Առանձին ենթագլխով ուսումնասիրելով պետական ծառայության

զարգացման ընդհանուր օրինաչափությունները և հիմնախնդիրները՝ հեղինակը փաստում է, որ պետական ծառայության համակարգում վերհանված հիմնախնդիրները հանրային ծառայության ցածր արդյունավետության, հասարակության զարգացման խնդիրների լուծմանը անբավարար ճկունության, պետական մարմիններում անձնակազմի ոչ ճիշտ պլանավորման և կառավարման պատճառ են հանդիսանում, և կատարված տեսական-իրավական վերլուծության հիման վրա ներկայացրել է պետական ծառայության համակարգի լավարկմանն ուղղված համապատասխան օրենսդրական փոփոխությունների առաջարկներ:

Ատենախոսության երրորդ՝ «Համայնքային ծառայության հիմնախնդիրները արդի ժամանակաշրջանում» գլուխը, որը բաղկացած է երեք ենթագլուխներից, նվիրված է հանրային ծառայության հաջորդ տեսակի՝ համայնքային ծառայության ձևավորման և զարգացման ընդհանուր օրինաչափությունների և հիմնախնդիրների ուսումնասիրությանը: Հեղինակը ուսումնասիրել և վերլուծել է տարբեր երկրներում գործող համայնքային ծառայության համակարգերը և հիմնավորել է, որ համայնքային ծառայությունն ունի հանրային, իրավական, սոցիալական, տնտեսական, էթիկական և կազմակերպական-կառավարչական նշանակություն: Առանձին ենթագլխով հեղինակը անդրադարձ է կատարել համայնքային ծառայության համակարգի կայացման և զարգացման ընդհանուր օրինաչափություններին և առանձնահատկություններին, տեսական-իրավական վերլուծության հիման վրա վեր է հանել համայնքային ծառայությունը կարգավորող օրենսդրության հիմնախնդիրները: Կատարված ուսումնասիրության արդյունքում հեղինակը գալիս է եզրահանգման, որ համայնքային ծառայության արդյունավետությունը մեծապես կախված է վերհանված հիմնախնդիրների լուծումից և ներկայացրել է համայնքային ծառայության համակարգի արդիականացմանն ու կատարելագործմանն ուղղված օրենսդրական առաջարկներ:

Ատենախոսության չորրորդ՝ «Հանրային պաշտոններ զբաղեցնելու հիմնախնդիրները արդի ժամանակաշրջանում» վերտառությամբ գլուխը, որը բաղկացած է երեք ենթագլուխներից, նվիրված է հանրային ծառայության վերջին տեսակի՝ հանրային պաշտոնների առանձնահատկությունների և հիմնախնդիրների

ուսումնասիրությանը: Հեղինակը նախ անդրադարձել է «հանրային ծառայության պաշտոն», «հանրային պաշտոն», «հանրային ծառայող» և «հանրային ծառայության մեջ գտնվող անձ» եզրույթների բովանդակային տարբերակմանը, և իրավացիորեն հիմնավորել է, որ այդ եզրույթները թե՛ բովանդակային, թե՛ իրավական առումով միանգամայն տարբեր հասկացություններ են: Այնուհետև ատենախոսության հեղինակը ներկայացրել է հանրային պաշտոնների տեսակների 2001 թվականի, 2011 թվականի և 2018 թվականի դասակարգման հիմնական օրինաչափությունները և հանրային պաշտոնների յուրաքանչյուր տեսակին բնորոշ առանձնահատկությունները: Առանձին ենթագլխով ուսումնասիրել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց փոխարինման և ազատման հետ կապված առանձնահատկությունները, վերաբերելի միջազգային փորձը, դատական պրակտիկան և ուսումնասիրության արդյունքում իրավացիորեն եկել է այն եզրահանգման, որ հանրային ծառայության համակարգում կարևորագույն հիմնախնդիր է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց փոխարինման և ազատման հետ կապված հարաբերությունները կանոնակարգող իրավական կառուցակարգերի ոչ բավարար կարգավորումը կամ բացակայությունը: Սահմանադրության և միջազգային իրավական նորմերի պահանջները իրացնելու, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց աշխատանքից ազատելու հայեցողական լիազորությունը չարաշահելու կամ կամայական կիրառելու իրավական հնարավորությունը բացառելու, ինչպես նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ժամանակավոր բացակայության հիմքեր առաջանալու դեպքերում վերջիններիս վերապահված գործառույթների անընդհատությունն ու ինստիտուցիոնալ կայունությունն ապահովելու նպատակով հեղինակը առաջարկել է օրենսդրական մակարդակով ամրագրել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց փոխարինելու կամ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձի նախաձեռնությամբ հանրային պաշտոն զբաղեցնող անձին ազատելու իրավական հիմքեր, և ներկայացրել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց փոխարինման կամ ազատման իրավական հիմքերի վերաբերյալ կոնկրետ օրենսդրական առաջարկներ:

Ատենախոսության եզրակացություններ բաժնում ատենախոսության հեղինակը ներկայացրել է հետազոտության հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները, որոնց մեծ մասն ունեն տեսական և կիրառական նշանակություն:

Ա. Մովսիսյանի թեկնածուական ատենախոսությունը շարադրված է պատշաճ գիտական մակարդակով, հետազոտությունում արված եզրահանգումները տրամաբանված են և բխում են ներածության մեջ ներկայացված խնդիրներից և նպատակներից:

Թեկնածուական ատենախոսության շրջանակում հեղինակին հաջողվել է ոչ միայն բավարար խորությամբ ուսումնասիրել և բացահայտել հանրային ծառայության հիմնախնդիրները, այլ նաև պետության և իրավունքի տեսության համատեքստում վերլուծել դրանց նշանակությունը յուրաքանչյուր քաղաքացու սահմանադրական իրավունքների և հիմնարար ազատությունների օրենսդրական և ինստիտուցիոնալ երաշխավորման համար:

Կարևորելով ատենախոսության նշանակությունը հանրային ծառայության համակարգի հիմնախնդիրները վերհանելու և օրենսդրական մակարդակով լուծելու ուղղությամբ, ինչպես նաև հաշվի առնելով ատենախոսության թեմայի բարդությունն ու բազմաշերտությունը՝ նպատակահարմար ենք համարում ներկայացնել հետազոտության վերաբերյալ որոշ նկատառումներ, որոնց շուրջ ցանկալի կլինեի լսել ատենախոսի պարզաբանումները.

1. Հետազոտության առաջին գլխի առաջին ենթագլուխը ատենախոսը նվիրել է Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ձևավորման նախադրյալների և զարգացման փուլերի ուսումնասիրմանը: Կարևորելով հեղինակի մոտեցումը, միևնույն ժամանակ գտնում ենք, որ աշխատանքը կշահեր, եթե հեղինակը մինչ Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ձևավորման նախադրյալներն ուսումնասիրելը, առանձին ենթագլխով անդրադարձ կատարեր հանրային ծառայության ինստիտուտի ներդրման առաջադեմ փորձին, վերջինի

առանձնահատկություններին: Այս մոտեցումը թույլ կտար էլ ավելի լիարժեք բացահայտել խնդրո առարկա ինստիտուտի էությունը ընդհանուրի համատեքստում:

2. Մեր կարծիքով ատենախոսության եզրակացության 14-րդ եզրահանգումը հավելյալ պարզաբանման կարիք ունի, քանզի հեղինակի կողմից ներկայացվող առաջարկության ներդրումը կարող է հանգեցնել որոշակի ինստիտուտների լիազորությունների բախման, ինչը հանրային իշխանության մարմինների գործառույթների անցնցում իրականացման տեսանկյունից ռիսկեր է պարունակում:

3. Հետազոտական աշխատանքի պաշտպանության ներկայացվող առաջին դրույթը ներկայացված է առավել ընդհանրական գծերով, մինչդեռ հետազոտական աշխատանքի բովանդակությունը պարունակում է կոնկրետ տեսական և գործնական բնույթի կարևոր դրույթներ և առաջարկություններ, որոնք արժանի էին ամրագրվել որպես գիտականորեն հիմնավորված հայեցակարգային մոտեցումներ:

4. Հեղինակը ատենախոսության մեջ հանրային ծառայության ինստիտուտի և հանրային ծառայության առանձին տեսակների վերաբերյալ միջազգային փորձը ուսումնասիրելիս ոչ համակարգված կերպով դիտարկել է մի շարք երկրների հանրային ծառայության առանձնահատկությունների և հանրային ծառայության տեսակների զարգացումները, սակայն առանց որևէ հիմնավորվածության և ընտրանքային դիտարկմամբ է կատարել հանրային ծառայության այդ համակարգերի ուսումնասիրությունը: Կարծում ենք հետազոտական աշխատանքը կշահեր, եթե հեղինակը հստակեցներ դիտարկված երկրների շրջանակի ընտրության չափանիշները, ինչը թույլ կտար ավելի հիմնավոր գնահատել դրանց արդյունքները, դրանք կապել աշխատանքում տեղ գտած առաջարկությունների հիմնավորման հետ:

5. Ատենախոսության պաշտպանության ներկայացվող վեցերորդ դրույթը, հատկապես հանրային որոշ պաշտոններ (օրինակ՝ նախարար, նախարարի տեղակալ) զբաղեցնող անձանց մասով, հավելյալ պարզաբանման կարիք ունի:

Հարկ ենք համարում նշել, որ ներկայացված նկատառումները որևէ կերպ չեն նվազեցնում կատարված հետազոտության գիտական արժեքը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ Անուշ Հովհիկի Մովսիսյանի «Հանրային ծառայության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (տեսական-իրավական վերլուծություն)» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը ամբողջությամբ համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է հայցվող՝ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Ատենախոսության պաշտոնական

ընդդիմախոս, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական,

Ի.Գ.Դ., ք.գ.թ., դրոցենտ

Ա.Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

02.05.2025թ.

Ա.Հ. Մովսիսյանի ատենախոսության պաշտոնական ընդդիմախոս, Ի.Գ.Դ., ք.գ.թ., դրոցենտ Ա.Ռ. Հարությունյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմի

Ղեկավար, Ի.Գ.Թ.՝

Ս.Կ. Առաքելյան

02.05.2025թ.